ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԾՀԲ - 10/60

ք. Երևան «6» 09 2010թ.

«Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս Կազմակերպության պետի տեղակալ Ս. Մելիքյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության և Գործակալության պետի 23.02.2009թ. 151-Լ հրամանով սահմանված լիազորության հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Բագրատունի Բարիք» ՓԲԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների և սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի:

1.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Ընդունել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետում նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Եթե իրականացվող աշխատանքների երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ պատշաճ չկատարելու համար վճարում է տույժ՝ հայտնաբերված թերության վերացման համար իրականացվող փաստացի ծախսերի չափով:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 11100000 (տասնմեկ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Գնի չանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.1.1 Սույն պայմանագրով Կատարողի կողմից՝ N1 Հավելվածին համապատասխան 2010թ. մատուցման ենթակա ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 120000 (հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (այսուհետև՝ պայմանագրային գումար): Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով ծառայությունների կմատուցվեն դրանց համար հատկացված ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր: Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագրի կնքման նպատակով ներկայացվելիք ապահովման չափը հավասար է տվյալ տարում մատուցվելիք ծառայությունների գնի տասը տոկոսին, իսկ կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ տվյալ տարում մատուցվելիք ծառայությունների գնի տասը տոկոսի և կանխավճարի չափի հանրագումարին, որը ներկայացվում է երաշխիքի կամ կանխիկ գումարի ձևով, իսկ գնման պայմանագրի գնի և նախատեսված ֆինանսական միջոցների տարբերության տասը տոկոսի չափով ներկայացվում է ապահովագրական հանձնարարագրի ձևով:

[illegible] դեպքում, երբ ծառայությունների մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարում չեն նախատեսվում ֆինանսական միջոցներ, ապա գնման պայմանագիրը լուծվում է:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցներով՝ Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն [illegible] դրամական միջոցները նախատեսված են:

4.3 Պատվիրատուն վճարում է Ծառայության մատուցման կամ սույն պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված ծառայության դիմաց սույն պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով [illegible] դեպքում, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2010թ., պայմանով, եթե Ծառայության մատուցումը [illegible] պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ

Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,05 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.2.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԳՆՈՒՄԱԿԻՑ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննարկման արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Այդ դեպքում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի հասցրած վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

Սույն պայմանագիրը նախատեսվում է ֆինանսական միջոցների մասով ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, իսկ մնացածի մասով դրա համար համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելու պահից և գործում է մինչև պարտավորությունների ամբողջ կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

պարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա) պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ) եթե դա պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ:

7.4 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է չուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.7 Սույն պայմանագրով նախատեսված պայմանագրի կատարման ապահովումը վերադարձվում է Կատարողին՝ պայմանագրի կատարման ավարտից 40 օրվա ընթացքում կամ կողմերի համաձայնությամբ նշանակմանը համամասնորեն:

7.8 Սույն պայմանագրով նախատեսված՝ իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուի անունից իրականացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը:

## 8. ԿՈՂԱՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ք. Երևան, Կոմիտասի պող. 54/1<br>Հայաշինհամբանկ, Արաբկիրի մ/ճ<br>ՀՎՀՀ 163058561289 | Արմավիրի մարզ, գ. Բագաբան<br>«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ<br>հ/հ 2474500218670010<br>ՀՎՀՀ 02235628 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
«6» 09 2010թ. կնքված
N ՇՁԲ - 10/60նման պայմանագրի

# Տեխնիկական բնութագիր

*ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոց /նոր մասնաշենք/*

1. Մարզադպրոցի համաշինարարական աշխատանքներ
2. Ներքին և արտաքին ջրմուղ-կոյուղու ցանցերի մոնտաժման աշխատանքներ
3. Ներքին և արտաքին ջեռուցման ցանցերի մոնտաժման աշխատանքներ
4. Ներքին և արտաքին էլեկտրատեխնիկական աշխատանքներ
5. Կապսայատան շինարարական, ջերմամատակարարման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման աշխատանքներ
6. Էլ. մատակարարման ենթակայանի կառուցում
7. Տարածքի բարեկարգման աշխատանքներ

## Տեխնիկական առաջադրանք

1. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտավորությունների շրջանակների համաձայն:
2. Տեխնիկական հսկողությամբ ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը շինարարական նորմերին և կանոններին:
3. Ստուգել Կատարող կազմակերպության կողմից օբյեկտի շինարարությունում օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական և պայմանագրային պահանջներին:
4. Ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար:
5. Իրականացնել ամենօրյա որակական հսկողություն, կատարել աշխատանքների ընդունումներ և մասնակցել կատարողական ակտի կազմմանը:

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ք. Երևան, Կոմիտասի պող. 54[բ] | Արմավիրի մարզ, գ. Բագարան |
| Հայէկոնոմբանկ, Արաբկիրի մ/ճ | «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ |
| հ/հ 163058561289 | հ/հ 2474500218670010 |
| | ՀՎՀՀ 02235628 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 2
«6» 09 2010թ. կնքված
N ԾՀԲ - 10/60 գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ՀՀ դրամ/

| *Տեխնիկական հսկողության ենթակա օբյեկտների անվանումները* | Նախատեսվում է գնել 2010թ. ընթացքում շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|
| *Մարզական օբյեկտների շինարարություն* | |
| *ՀՀ Կոտայքի մարզ* | |
| Չարենցավանի մարզադպրոց /նոր մասնաշենք/ | 120000 |

Պ ա տ վ ի ր ա տ ու

ք. Երևան, Կոմիտասի պող. 54[բ]

Հայկանոմբանկ, Արաբկիրի մ/ճ

ՀՀ 163058561289

(ստորագրություն)

Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ

Արմավիրի մարզ, գ. Բագարան
«Արոշինինվեստբանկ» ՓԲԸ
h/h 2474500218670010
ՀՎՀՀ 02235628

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 3
«6» 09 2010թ. կնքված
N ԾՁԲ - 10/60 գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ՀՀ դրամ/

| հ/հ | ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2010թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝ | | | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | Չարենցավանի մայրուղայում /նոր ասֆալտաշեր/ | | | | 105120 | 105120 | 105120 | 120000 | 120000 | 120000 | 120000 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կայուղով

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

ք. Երևան, Կոմիտասի պող. 54[բ]
Հայէկոնոմբանկ, Արաբկիրի մ/ճ
հ/հ 163058561289

(ստորագրություն)

Կ.Տ

**Կ ա տ ա ր ո ղ**

Արմավիրի մարզ, գ. Բագարան
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
հ/հ 2474500218670010
ՀՎՀՀ 02235628

(ստորագրություն)

Կ.Տ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 8
**/06.09.2010 թ. կնքված N ԾՁԲ-10/60 պայմանագրի/**

ք. Երևան

11.04.2017թ

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բագարանի բարիք>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1162-Ն որոշմամբ, և հիմք ընդունելով և ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և <<Բագարանի բարիք>> ՓԲԸ-ի միջև 06.09.2010թ. կնքված՝ ծառայության մատուցման N ԾՁԲ-10/60 ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների գինը, 2017 թվականի համար նախատեսված ֆինանսական հատկացումների շրջանակներում, սահմանել **984 250 (Ինը հարյուր ութսունչորս հազար երկու հարյուր հիսուն)** ՀՀ դրամ, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.1.2 Հաստատել ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N1-ի:

## 2.Այլ պայմաններ

2.1 Սույն ամաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2017 թվականի համար նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ավարտը:

2.2 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 06.09.2010թ. կնքված N ԾՁԲ-10/60 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի N1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

1. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **Պատվիրատու** | **Կատարող** |
|---|---|
| ՀՀ Կառավարությանն առընթեր<br>քաղաքաշինության պետական կոմիտե,<br>Ք. Երևան, Հանրապետության հրապարակ<br>կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011012714,<br>ՀՎՀՀ 02565827 | «Բաղարանի բարիք» ՓԲԸ<br>ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բաղարան<br><<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ,<br><<Կինյան>> մասնաճյուղ<br>Հ/Հ 1150049883620[illegible]<br>ՀՎՀՀ 02235628 |
| Աշխատակազմի ղեկավար<br>Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն) | Տնօրեն՝<br>Ս. Մարգարյան<br>(ստորագրություն) |

*Հավելված թիվ 1*
*06.09.2010թ. կնքված N ԾՁԲ-10/60 պայմանագրի*
*թիվ 1 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
## *(Բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 06)*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն | - | - | 49 200 | 246 100 | 246 100 | 246 100 | 639 800 | 639 800 | 639 800 | 984 250 | 984 250 | 984 250 | 984 250 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

**Պատվիրատու**
ՀՀ Կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե,
Ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012714,
ՀՎՀՀ 02565827
Աշխատակազմի ղեկավար
Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**Կատարող**
«Բազարանի բարիք» ՓԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բազարան
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ,
<<Կինյան>> մասնաճյուղ
Հ/Հ 11500498836200,
ՀՎՀՀ 02235628
Տնօրեն՝
Ս. Մարգարյան
(ստորագրություն)